ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավան համայնք
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1
Հեռախոս (096) 11-00-44
էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

24.10.2017թ.
թիվ 251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 16-ին կայացած հերթական / N11/ նիստի որոշումները:

Միաժամանակ հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին>> N52-Ն, <<Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին>> N53-Ն և <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N55-Ն որոշումները սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 17 /տասյոթ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի N51-Ա

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 16-ի հերթական նիստի (թիվ11) օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ... 04702537

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 16-ի
N51-Ա որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ԹԻՎ11) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ

51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

52. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

53.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

54. ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

55. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 16-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

56. <<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

57. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

58. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

59.<<ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2017>> - ԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄ**
16 հոկտեմբերի 2017 թվականի N52-Ն

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-81-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագիծը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան խճուղու 1-ին փողոցի 1/4 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 2,3173 հեկտար հողամասը /լոտ 1, կադաստրային ծածկագիր 04-065-0609-0006/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 222 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 11 100 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանյան խճուղու 1-ին փողոցի 1/1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության այլ հողերի 0,6001 հեկտար հողամասը /լոտ 2, կադաստրային ծածկագիր 04-065-0612-0018/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 58 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 2 900 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանյան խճուղու 1-ին փողոցի 5/3 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության այլ հողերի 0,9545 հեկտար հողամասը /լոտ 3, կադաստրային ծածկագիր 04-065-0612-0016/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 92 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 4 600 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

4. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան խճուղու 1-ին փողոցի 1/5 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 0,4863 հեկտար հողամասը /լոտ4, կադաստրային ծածկագիր 04-065-0609-0014/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 48 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 2 400 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

5.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, մրցույթն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄ**
16 հոկտեմբերի 2017 թվականի N53-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի48-րդ հոդվածով, 76-81 հոդվածներով , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագիծը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 10 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել համայնքի վարչական սահմաններում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Երևանյան խճուղու 1-ին փողոցի 5/2 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 0,6939 հեկտար հողամասը /լոտ 1, կադաստրային ծածկագիր 04-065-0612-0017/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 68 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 3400 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 10 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել համայնքի վարչական սահմաններում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Երևանյան խճուղու 1-ին փողոցի 5/4 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 1,6859 հեկտար հողամասը /լոտ 2, կադաստրային ծածկագիր 04-065-0612-0020/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 162 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 8100 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

3.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, մրցույթն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

| | |
|---|---|
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ | ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| ՊԱՊԻՆ | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
16 հոկտեմբերի 2017 թվականի N54-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի վեցերորդ կետով, **ավագանին որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 16-ի
N54-Ա որոշման

# ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

## Բյուջեի եկամուտներ

հազ.դրամ

| | Եկամուտների տեսակները | Տարեկան /պլան/ | Հաշվարկային /պլան/ | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկ | 2 000,0 | 1 300,0 | 1 596,6 | 122,9 |
| 2. | Գույքահարկ | 16 700,0 | 10 350,0 | 10 375,1 | 100,2 |
| 3. | Տեղական տուրք | 240,0 | 190,0 | 218,4 | 115,0 |
| 4. | Տեղական վճար | 5 000,0 | 3 300,0 | 3 340,5 | 101,2 |
| 5. | Հողի վարձակալության վճար | 5 640,0 | 4 100,0 | 4 906,3 | 119,7 |
| 6. | Գույքի վարձակալության վճար | 272,6 | 120,0 | 90,0 | 75,0 |
| 7. | Ծառայությունների մատ. Վճարներ | 20,0 | 15,0 | 12,3 | 82,0 |
| 8. | Այլ եկամուտ | 761,1 | 761,1 | 761,1 | 100,0 |
| 9. | ՀՀ պետական բյուջեից դոտացիա | 63 044,1 | 47 283,0 | 47 283,1 | 100,0 |
| 10. | Տարեսկզբի ազատ մնացորդ | 7 993,3 | 7 993,3 | 7 993,3 | 100,0 |
| 11. | Հողի օտարումից եկամուտ | 3 227,4 | 3 227,4 | 4 024,6 | 115,4 |
| | Ընդամենը | 104 898,5 | 78 639,8 | 80 601,3 | 102,1 |

## Բյուջեի եկամուտների հաշվին կատարված ծախսերը

հազ.դրամ

| | Հիմնարկներ | Տարեկան /պլան/ | Հաշվարկային /պլան/ | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տեղական ինքնակառավարում | 34 800,0 | 25 875,0 | 21 178,2 | 86,2 |
| 2. | Կրթություն և գիտություն | 14 275,0 | 8 424,3 | 7 533,0 | 89,4 |
| 3. | Սոցիալական ապահովություն | 6 500,0 | 6 500,0 | 5 540,0 | 85,2 |
| 4. | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 2 483,0 | 2 100,0 | 1 623,4 | 77,3 |
| 5. | Նախադպրոցական կրթություն | 29 700,0 | 20 000,0 | 19 700,0 | 98,5 |
| 6. | Մշակույթ,սպորտ,կրոն | 700,0 | 500,0 | 271,4 | 54,2 |
| 7. | Աղբահանություն | 3 000,0 | 2 000,0 | 2 000,0 | 100,0 |
| 8. | Գյուղատնտեսություն | 500,0 | 300,0 | 300,0 | 100,0 |
| 9. | Պաշտպանության | 1 719,8 | 1 719,8 | - | - |
| 10. | Տրանսպորտ. Միջոց. Ձեռք բերում | 7 893,3 | 7 893,3 | - | - |
| 11. | Վարչական սարքավորումներ | 3 227,4 | 3 227,4 | 1 415,0 | 43,8 |
| 12. | Ոչ նյութական հիմն. Միջոցներ | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 |
| | Ընդամենը | 104 898,5 | 78 639,8 | 59 661,0 | 75,8 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի N55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 16-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N16-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) համայնքի վարչական բյուջեում ավելացնել եկամուտ՝

ա. մարդատար-տաքսի ծառայություն իրականացնելու համար 29 600 ՀՀ դրամ և այն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

բ. շինարարության թույլտվության համար 24 800 ՀՀ դրամ և այն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

գ. աճուրդի մասնակցության վճար՝ 79 000 ՀՀ դրամ և այն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին:

2) Համայնքի ֆոնդային բյուջեում ավելացնել հողի օտարումից եկամուտ՝ 797 250ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին.

3) Նախատեսված և հաստատված հոդվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5122 հոդվածից պակասեցնել 30 000 ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5132 հոդվածին.

բ. 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5122 հոդվածից պակասեցնել 627 400 ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին.

գ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5121 հոդվածից պակասեցնել 7 893 300 ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին.

դ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5122 հոդվածից պակասեցնել 1 100 000 ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին.

ե. 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4111 հոդվածից պակասեցնել 1 000 000 ՀՀ դրամ և այն ուղղել 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4729 հոդվածին.

զ. 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4251 հոդվածից պակասեցնել 950 000 ՀՀ դրամ և այն ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

է. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածից պակասեցնել 800 000 ՀՀ դրամ և այն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ԿԱՐԵՆ | ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՊԱՊԻՆ | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N16-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ

<< Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 5-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> 2017թվականի հոկտեմբերի 16-ի N55-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքին պատվիրակված, պարտադիր և կամավոր լիազորությունների կատարման իրավական կողմի ապահովման համար ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու անհրաժեշտություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 56-Ա

## *<<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը տրամադրել 500 000 ՀՀ դրամ՝ <<Լավագույնն իր ոլորտում>> 2017 թվականի ամենամյա մրցույթ-մրցանակաբաշխություն և պետական տոների միջոցառումներ կազմակերպելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի N57-Ա

# ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի, 18-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի , 22-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 1-ի N5-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Սոցիալական ապահովության վճարներ>> գումարից 180 000 ՀՀ դրամ, որպես դրամական օգնություն, տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին: Ընտանիքների ցանկը՝ համաձայն հավելվածի 1:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի համեմատաբար սոցիալապես բարվոք վիճակում ապրող դիմումատու ընտանիքներին չտրամադրել դրամական օգնություն: Ընտանիքների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՊԻՆ ՄԻՐԶԱՄՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017թվականի հոկտեմբերի 16-ի
N57-Ա որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| N/ N | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Գումարի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | Խաչատրյան | Գագիկ | Ռազմիկի | 40 000 |
| 2. | Հարությունյան | Աստղիկ | Սարգսի | 50 000 |
| 3. | Սանամյան | Քնարիկ | Մուրադի | 50 000 |
| 4. | Սարգսյան | Քնքուշ | Խաչիկի | 40 000 |
| | Ընդամենը | | | 180 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017թվականի հոկտեմբերի 16-ի
N57-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄՈՒՄԱՏՈՒՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ

| N/ N | Ազգանուն | Անուն | Հայրանուն |
|---|---|---|---|
| 1. | Խաչատրյան | Անգին | Գրիգորի |
| 2. | Մինասյան | Օֆելյա | Արշամի |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
16 հոկտեմբերի 2017 թվականի N58-Ա

# ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ <<Էջմիածնի ավտոդպրոց>> ՍՊԸ 2017 թվականի օգոստոսի 8-ին ստացած N08/26 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Սոցիալական ապահովության վճարներ>> գումարից համայնքի բնակիչ, զինակոչիկ Խաչատուր Հմայակի Պողոսյանին · հատկացնել 30 000 ՀՀ դրամ՝ 2017 թվականի օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ <<Էջմիածնի ավտոդպրոց>> ՍՊԸ սովորելու ընթացքում երթևեկության ծախսերն ապահովելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի N59-Ա

### <<ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2017>> - ԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի N01/07.1/4153-17 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Սոցիալական ապահովության վճարներ>> հոդվածով նախատեսված գումարից <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից 2017թվականի նոյեմբերի 23-ին անցկացվելիք <<Հեռուստամարաթոն-2017>> - ին հատկացնել 50 000 ՀՀ դրամ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

| | | |
|---|---|---|
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | |
| ԿԱՐԵՆ | ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | |
| ՊԱՊԻՆ | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ